

Տարեկան գիւղը 10 բուրպէ կէս տարվանը 6 բուրպէ  
Առանձին համարները 5 հօպէկով:

Անդիքի լիսում՝ զրվում են միմիայն կոմբագրատան մէջ:

(Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի  
Տիֆլուսը. Պեդական „Մանուկ“

# ՕՐՎԱՅԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑ

«Մշակի» մայիսի 27-ի և 28-ի  
համարներում «Օրվայ կենսական  
հարց» յօդուածով ցոյց տուեցինք  
ազգայնոցս «մի մեծ ընկերութիւն  
կազմելու անհրաժեշտութիւնը, ըն-  
կերութիւն, որը լինի սիրտ, որից  
բղխելով կենսաբեր երակները կը  
թափանցեն ամենուրեք, ուր կայ  
հայի «ա խ։» Այն օրվանից՝ սկսեց  
արծարծվել այդ միտքը, մեր բա-  
րեմիտ երիտասարդները այդ հար-  
ցը դարձրին իրանց համար խօ-  
սակցութեան և հոգատարութեան  
առարկայ, մանաւանդ որ գաղա-  
փարը ինքն ըստ ինքեան հայ ազ-  
գի պատմական թշուառ ճգնա-  
ժամի բերմունքն է։

Մի ազգ, որ իր վրա պատե-  
րազմական անսասելի նեղութիւն-  
ները, կոտորուածք, աւերումն և

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Յունաստանը մինչև 1820 թւականը գտնվում էր տաճկաց լծի տակ: 15 դարու վերջերում օւնացիք կ. Պօլիսը առնելուց յետոյ տարաելով իրանց իշխանութիւնը ամբողջ Բակաւան թերակղզու վրա, սփռվեցան նոյնպէս և ամող Յունաստանում տիրելով միանգամայն բոլոր մրցոցներին և քաղաքներին: Յոյները առաւել քան 50 տարի շարունակ հեկեկում էին տաճկական առը լծի տակ, ողբալով կորուսած անկախութիւը և հսագարեան փառքը: Ջը նայելով այն դաշը վիճակին, որի մէջ գտնվաւմ էր նրանց հայրենքը քարու քանդ, աւերակ քաղաքներով և աւաներով, չը նայելով որ օսմանցւոց տէրութիւնը դեռ դրուսած չէր իր զօրութիւնը, այնու ամենայնիւ անք չը կորցրին իրանց յոյսը և հաւատը, թէ գայ մի ժամանակ, երբ բարեյաջող հանգամանքը թոյլ կը տան նրանց թօթափել բռնաւորի ւը և նորից աղատութիւն վայելի: Առաւել ևս ծանում էր նրանց յոյսը երբ տեսնում էին, թէ չպէս մեծահօր Սուլթանի տէրութիւնը հրափիւն արծուի հարուածների տակ նուազում էր և սյաբյում: Մանաւանդ այն կոփիւները, որ վարեց մանցոց տէրութիւնը սրանից հարիւր տարի աշջ ռուսաց Եկատերինա կայսրուհու հետ, սասակ թուլացրին նրան, այն ջարդը որ տուեցին Սուլովը և Ռումենանցեվը սուլթանի զօրքերին միանայն պակասեցրին տաճկաց իշխանութեան ոյժը կորցնել տուին այն սարսափը, որ ի վազուց տի-

գաղթականութիւնը կրելուց  
տոյ, ենթարկվի այնուհետև  
տական աւարառութեանց, չ  
ջման և մանաւանդ սովի  
տարափոխիկ հիւանդութիւնն  
Ճիրաններին, նոյն այդ ա  
չունենայ ոչ մի լնդհանուր կա  
և ոչ մի բարեկարգեալ կազմ  
կերպութիւն՝ որի նպատակը  
սառը դատողութեամբ, ծանր կ  
ռելով, կանոնաւոր կերպով գո  
կատարելը, բոլոր մշտական  
ժամանակաւոր ծագած թշու  
ուութիւնների առաջն առնելը,—  
թէ, ասում ենք, այդ բոլորը պ  
կասի մի ազգի մէջ և աղ  
թողիվ իր հազար ու մէկ թշու  
ուութիւններից պատճառված  
ներցիային,—անշուշտ նա կոր  
տեան անդունդը կը գլորվի:

Ըստ ընկերութեան անհրաժե  
տութիւնը պարզապէս զգալո  
յետոյ, կը մնայ միայն մշակել  
ծրագիր, որը յարմար լինէր գ  
ղափարի ոգուն։ Հասկացող, կը  
թեալ անձինք երբէք պակաս չ  
եր մէջ, ամեն տեղ, ամեն քա  
ղաքում կը գտնվեն նորա. Հա

կաւոր է մի կաղմակերպութ  
ունենալ, որպէս զի այդ բ  
անձինքը գործեն մի ճանապ  
հով, նպատակայարմար ճանապ  
հով:

Ո՞վ չէ ցանկանում, որ մեր  
սումնարանները խառն ու շփ  
դրութիւն չունենան. առաջա  
վում է ահա մեր ծխական դ  
րոցների սովորական ընթաց  
քարենորոգելու, հարց է ծագո  
ուսումնարաններ հիմնելու, ուր  
ւանդպեն և արհեստներ, բայց  
քա, կարծեմ, ընդհանուր հա  
րակական հարցեր են: Չը մոռ  
նանք և այն, որ մեր ծխակ  
դպրոցները Վեհափառ Կայ  
զիկոսի իրաւասութեան և հով  
նաւորութեան ներքոյ են գտա  
վում: Այդ մի հարց. բայց քա  
բազմակողմանի են մեր կենսակ  
և մտաւոր պիտոյքը, այնքան քա  
մակողմանի պէտք է լինեն  
գաղափարները և նոցա գործ  
դրութեան եղանակը: Ո՞վ չէ ցա  
կանում, որ մենք մեր ձեռքին ո  
հեստ ունենանք, մեր գլխու

աղբատակնը բաց է առաջօնեան 10—2 ժամ  
(Ապի կիրակի և ուսն օրերին)

Յայտաբարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Ըստաւրաբովի իւնների համար վճարում են  
իւրաքանչիւր բառին շ կօպէկ.

卷之三

կուշտ և խելացի քաղաքացիք,  
բայց և ով չը գիտէ ընկերու-  
թիւնների փրկարար նշանակու-  
թիւնը:

Այս մտքերը կրկնելովս չենք  
կարծում նորութիւններ յայտնել,  
քաւ լիցի. մենք միայն արտայայ-  
տում ենք այն, ինչ որ, պարզն  
ասած, ամեն մի փոքր ի շատէ  
հասկացող բարեմիտ անձի ուղեղի  
մի անկիւնում նստած է: Մար-  
դը պէտք է այս աշխարհիցը չը  
լինի, որ խորթ նայի այս բանին:  
Դեռ գուցէ, շատ սակաւ ենք  
խօսում այս մտքի մասին, նորան  
այբուբենական համարելով, այդ  
մտքի վերջին տառերն ևս շատ  
հասկանալի են շատերին: Կառւմ  
են մի քանիսները ինչու նոյն այդ  
գաղափարը չիրագործենք «գաղ-  
թելոց օգնող կօմիտետի» ձեռքով,  
նորա հովանաւորութեան տակը  
մտնելով: Այնքան ասեց «Մշակ»,  
այնքան խօսեց, որ դրդի այդ «կօ-  
միտետը» դէպի մի շարժողու-  
թիւն, բայց հնար չեղաւ: Ի՞նչ  
հարկ կայ, ի՞նչ կապ ունի այս նոր

և ծաղկած դրութեան, որի պաշտպանութեան համար ծովային աւաղակներից Հեղքա, Ֆսարայ և Սպեցիա կղզիների բնակիչները կազմեցին զինուորակած նաւեր: Այս նաւատորմը, որ շինված էր վաճառականական նպատակով և որ ապագայում ազատութեան համար սկսած պատերազմի ժամանակ մեծ ծառայութիւն արեց յոյներին, ամեններին չէր ընկնում թիւլքերի աչքերին և գուցէ արհամարհանքով էին նայում նրա վրա: Յոյների բարօրութեան աճման հետ շատանում էր և նոցա սէրը դէպի ուսուումը, և պէտք է խոստովանած, որ ուսման ծարաւը լցուցանելու համար նորդա ոչինչ չէին խնայում, հիմնելով բազմաթիւ դպրոցներ հայրենիքում և մասամբ երիտասարդներ ուղարկելով արտասահման բարձրագոյն գիտութեանց համար, կրթութիւնը նոյնպէս մեծ զարկ տուեց հայրենասիրութեան զարգանալուն և ծամարիտ որ իրանց մատենագրութեան հետ ծանօթանալը, որ յիշեցնում էր հնադարեան հելենական փառքը, չէր կարող ուժգին կերպով չաղղել նոր յոյների վրա, յարուցանելով նրանց մէջ դառը կսկիծ գէպի այժմեան վիճակը և ձգտում նորից ձեռք բերել իրանց պապերի անկախութիւնը և փառքը: Արդէն 19 գարում Փարիզի յոյն ուսանողների մէջ կազմվեցաւ մի ընկերութիւն, որ գրականական պարագամունքների պատրուակաւ գաղտնի նպատակ էր դրած հայրենիքի ազատութեան հետամուստ ինեւ: Այս ընկերութեան անդամ էր և թիվաս բանաստեղծը, որի պատերազմական երգերը յոյներին գէնքի էին հրաւիրում և անասելի կերպով ազդում էին երիտասարդութեան վրա, իսկ աւելի ևս աւելացաւ նրանց ներգործութիւնը, երբ յիշեալ բանաստեղծը Բելլբադի փաշայի հրամանաւ բռնվեցաւ և չարաչար կերպով նահատակվեցաւ: Վիշնայի կօնքրէսի ժամանակ (1815 թ.) Փարիզի յոյն ընկերութիւնը ընդարձակվեցաւ ընդունելով իր մէջ բազմաթիւ անդամներ Ուսուսատանի և ուրիշ երկիրների յոյներից և դարձաւ բաղա-

կազմելի ընկերութիւնը այն կօմի-  
տետի հետ, որ պէտք է օգնէր  
քրիստոնեայ գաղթելոց. և  
ուր են սորա անդամները, ուր է  
նրա կանոնադրութիւնը, ուր են  
նրա ժողովները, նիստերը, ուր են  
նրա վերաքննիչ մի որոշ և օրի-  
նաւոր կազմակերպութիւն ունե-  
ցող հաստատութիւնները։ Եյդ  
կօմիտետն էլ, եթէ ցանկանում  
էք, կարող էք մեր կնճռոտ հար-  
ցերի կարգումն շարել... Եթէ  
յիրաւի այդ կօմիտետի մէջ կա-  
դեռ շունչ, — նրան շատ բաւական  
ծառայել իր ուղղակի նպատակն

Մեր կարծիքն է առանց քաշ-  
քշելու հարցը, հիմնել մի բարե-  
գործական ընկերութիւն  
բարոյապես կապելու հայ բանիմաց  
անձինքներին, որոնք ամեն տեղ  
սփռած են և նոցա կամ այդ ըն-  
կերութեան չորհիւ, նորա անխոնջ  
աշխատութեամբ հետզհետէ, քայլ  
առ քայլ մտցնել ժողովադի կորած  
մոլորած անկիւնների մէջ կրթու-  
թեան և տնտեսականութեան  
խելացի և փրկարար հիմունքը:  
Այսպիսի մի ընկերութիւն մեծ  
համակրութիւն կը վայելէր կա-  
ռավարութեան կողմից և իր լայ-  
նատարած ճիւղերով և բազմա-  
կողմանի գործունէութեամբ կա-  
տարեալ հեղինակութիւն կը ստա-  
նար հասարակութեան մէջ:

Բ. Նավասարդեան

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

301 | 10-ին

Շուշվայ մէջ տիրող կենսական պիտոյքների չափագանց և անմատչելի սղութիւնը, որի հետ և տեղացի չքաւոր ընտանիքների դժուարութիւնները սկսում են կամաց կամաց նուազիլ: Ներկայ տարբան հունձը գրեթէ բոլոր տարիներից առանձ եղել: Հացի Փունքը, որ մի ժամանակ 12 կոպէկ էր, այժմ իջել է մինչև 3 կօպէկի և նայելու այս տարբայ առատութեանը, ապագայում դեռ աւելի արժանութեան կը յուսամք: Անցեալում ալիքի գինը մինչև 9 րուբլի անգամ բարձրանալուն մենք կասկած չունեինք, եթէ տնղացի միքանի հարուստ անձինքներ իւրաքանչիւրը 50 րուբլի դնելով ալիւր չը բերել տային Բազուկից մինչդեռ օրերով հասարակական կշուի տակ ալիւր չէր բերվում: Այնպիսի մի արագ օգնութեանը, որ հասսաւ իր ժամանակին, քաղաքացիք առաւելապես պարտաւոր են մեծ: Մինաս Խունունցին, որ ի անձնանուէր և անխոնջ աշխատութեամբ գրեթէ առաջինը եղաւ, որ հարիւրաւոր ընտանիքներ արտասուքը դադարեցնելու ջանաց և նրանց մինչ ներկայ առաջ հունձը հասցնելու կարողացած աշխացութեամբ մի քանի պարոնների: Քաղաքացածանուական դասակարգը նոյնպէս ոչ սակաւ ո նութիւն հասցրեց իր կարօտ համաքաղաքացին րին, միայն անտարբերները մնացին մեր հոգերու կանոները:

Այս տարբան թանգութիւնը, որ գուցէ շատեր անմուանալի կը մնայ, նիթական մեծ է: Ռուած տուեց տեղացիների ստորին և միջդասակարգերին, որոնց մէջ շատերը կային որոշունէին և մուրալ կամացէին:

«Մշակի» հրաւէրները մեր սովատանջ եղաւ ներին օգնութեան ձեռք կարկառելու, արձագագտան ինչպէս բազմաթիւ գաւառական քաղաքը բում, նաև առաւելապէս Շուշում: «Մշակի» թթերը անհամբերութեամբ ստանալով, մեծ համարութեամբ կարդացվում էին: Շատ ուրախով տեսնել թէ ինչպէս շատ ընտանիքներում, մի անգամ օրիորդներ և դպրոցական աշակերտու կարդալով իրենց ազգակիցների աննախանակ դրութիւնը, մեծ ցաւակցութիւն էին յայտնում մասին: Ահա միակ ուրախալի երեսութը, որ սոյեա յայանի եղաւ իւրաքանչիւր մի հայաբնակ զաքում, և արդարեւ շատերը նրանցից, որ պարծանք էին համարում աւելի եւրօպական գուները գործածել մինչև անգամ ընտանե-

շրջանում, կարգալ աւելի օտարազգի լրագիր վերջապէս զգացին, որ լինելով հայ պիտի պնեն հայ լեզուն և ազգութիւնը: Փաստար գյաղորդում է պայծառ առաւօտը:—Նամակ վերջացրած չնորհաւորում ենք «Մշակ» լիր գտած սիրելի համակրանց համար:

## ԱՐԵԼ Ապրեսսար

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Երազիրների մէջ կարգում ենք Հետեւալ  
տեղեկութիւնները:

Պետութիւնների ընդհանուր գրութիւնը  
յանձնված է արդին թիւքաց և յունաց  
կառավարութիւններին: Այդ երկու երկիր-  
ներին էլ յայտնի է երօպական պետու-  
թիւնների կամքը: Սուլթանը այդ գրութիւնը  
անյապաղ յանձնեց Բ. Դրան քննութեանը  
և խկոյն յայտնվեցաւ, որ Թիւքիան յուլիսի  
վերջին կը պատասխանի: Յունական կառա-  
վարութիւնը խկոյն պատասխանեց: Զը նայե-  
լով Գէորգ թագաւորի բացակայութեանը  
արտաքին գործերի մինիստրը անյապաղ պա-  
տասխանեց մի գրութեամբ, որի մէջ ասված  
է, թէ Յունաստանը անպայման հպատակ-  
վում է երօպական մեծ պետութիւններ  
վճախն: Այդ գրութեան օրինակը շուտո-  
տպվեցաւ յունաց կառավարութեան պաշ-  
տօնական լրագրի մէջ: Աթէնքի եկեղեցիններ  
մէջ շնորհակալութեան մաղթանքներ կա-  
տարվեցան, գիշերը յունաց մայրաքաղաք  
լուսաւորված էր:

Այսպիսով յոյն-թիւքական հարցը ս-  
ևս երկու կողմերի հարց չէ: Յունաստան  
բաւականացաւ նրանով, ինչ որ տուին պե-  
տութիւնները: Մնում է Բ. Դրան համաձայ-  
նութիւնը ստանալ, որ այսուհետեւ Բէրլի-  
կօնֆերենցիային մասնակցող պետութիւննե-  
հետ գործ կունենաց:

լուսաս մէջ չչ յրշզպէս, Ես չ թէաս առաջ  
կամիջոցի ընթացքում պէտք է պատաս-  
խանի Բ. Դուռը Ներօպապի պահանջին: Եթէ  
գրութիւնը ստանալուն պէս Բ. Դուռը կարո-  
ղացաւ յայտնել, որ երեք շաբաթից յետոյ  
միայն կը պատասխանի, երբ այդ ժամանաւ  
կամիջոցը կանցնի, նա կարող է մի նոր առիթ  
գտնել զործը ուշայնելու համար և այդ ձեռով  
հարցը կարող է մինչև աշունք յետաձգիլ:

Մի և նոյն ժամանակ անսպասելի է, որ Բ.  
Դրան պատասխանը վճռողականապէս բացա-  
սական, կամ դրական համաձայնութեան բր-  
նաւորութիւն ունենայ: Աւելի հաւանական  
է, որ Բ. Դուռը այդ պատասխանով կը փորձի  
նոր բանակցութիւններ սկսել, կամ հակա-  
ռակ առաջարկութիւն կանի: Այդ առաջար-  
կութեանը պետութիւնները դարձեալ միա-  
սին պէտք է պատասխանեն, ուրեմն նրանք  
պէտք է նորից խորհրդակցեն և նորից հա-  
մաձայնվեն, իսկ այդ համաձայնութեան  
կայացնելը այժմ գոնէ աւելի գժուար կը լի-  
նի, քան թէ հերլինի կօնֆերենցիալի ժամա-  
նակ: Գործը դարձեալ կերպարի և կապացու-  
ցանէ Բ. Դրանը, որ նա իրաւացի էր, չ  
վախինալով պետութիւնների առաջարկու-  
թեան ընդ հանուր բնաւորութենից:

Գործի այդպիսի պատկերափոխութիւն  
անկասկած ցանկալի չէ պետութիւնների հա-  
մար և պէտք է կարծել, որ նրանք նախա-  
տեսել են այդ հանգամանքը և առաջո-  
ւամաձայնութիւն են կայացրել, թէ ինչպէ-  
պէտք է վարվել այդ գէպքում: Պէտք պե-  
տութիւնների ընդհանուր գրութեան մ  
Բ. Դրան պատասխանի ժամանակը որոշվա-  
չէ, բայց երևի Կ. Պօլսի մէջ եղած եւրօպ-  
կան դեսպանները իրանց կառավարութիւն-  
ներից դրա մասին յանձնարարութիւններ  
ստացել: Պէտք է յուսալ, որ սուլթան  
յայտնի է պետութիւնների վճռուը ըլ հա-  
բերել գործի յետաձգութիւնը, հակառ  
գէպքում ընդհանուր գրութեան յանձնելը  
գիտական կօմեդիա կը լինի,  
մէջ Յունաստանին շատ ծիծաղելի գեր  
վիճակի այն արագութեան պատճառ  
որով նա ենթարկվեց Ներօպապի վճռին:

Կ. Պօլսից «Polit. Corresp.» լրագրին զբում  
են Հետեւեալը:

**ANSWER** *What is the name of the author of the book?*

քական դաշնակցութեան գՀետերիա - Մոռա  
յի բարեկամներ անունով, որոնց թւումն է  
նոյնպէս կայսր Ալէքսանդր I և մինիստր Յո-  
հան կապօթիատրիա, Այս ընկերութեան փ-  
ղով զէնքեր էին բերում Եւրօպայից Յունա-  
տան։ Յոյների յոյսը աւելանում էր, երբ տե-  
նում էին որ տաճկաց տէրութիւնը փոքր և  
փոքր թուլանում է և քայքայվում, Արդէն Մ-  
դավիան և Վաղարշիան (այժմեան Ուումինիա-  
գանգում էին Ուուսաստանի հովանաւորութեա-  
ներքոյ, իսկ Սերբիան կառավարվում էր իր սեփ-  
կան իշխանից՝ Միջօ Օբրենովիչից, Եպիստոոսո-  
համարեա ինքնիշխան տիրում էր Մահմետ Ա-  
Սպիրում և Մակեդոնիայում իշխում էր Ալի Փ-  
շա նոյնպէս ինքնիշխան, Այս վերջնը 1820  
զէնք առնելով սուլթան Մահմետ II դէմ յոր-  
քեց դէպի ապստամբութիւն նոյնպէս Սուլիո-  
անուանված քաջ յոյն իսանաբնակներին, իսկ գՀե-  
րիա ընկերութիւնը յուսալով Ալի փաշայի նի-  
կակցութեան, գարնան 1821 թ. բոլոր Յունաստա-  
նշան տուեց ապստամբվելու, նոյն տարվայ մա-  
ամուսն իշխան Ալէքսանդր Խասիլանդի՛ այս  
կերութեան անդամների մէկը և Ալէքսանդր Կ-  
սեր աղիւտանտը մի բուռը համախօններով  
սարարիայի կողմից ուուսաց սահմանից ան-  
տածկաց հողը և տիրեց Եասսա և Բուխա-  
քաղաքներին, Ապստամբները հրամիրելով պա-  
րազմի քրիստոնեաներին, անխնայ կոտորում  
մահմետականներին,

թէս Իպսիլանդիի փոքրիկ գունդը Դրագելշ  
մօտ 1821 թ. մեծ ջարդ ուտելուց յետոյ բոլ  
վին ջնջեցաւ և ինքը Աւստրիա փախաւ, և  
նրա յարձակումը թիւրքաց հողի վրա կամ  
արագութեամբ ոտի կանգնեցրեց ամբողջ Յուն  
տանը և ահա այսպիսի կերպով սկսվեց յոյշ  
կռիւը թիւրքաց դէմ անկախութեան համար,  
աևեց մինչև 1829 թ..

Տաճկաց կայսերութիւնը 1821, 22, 23 թւ

անգօր գտնվեցաւ ընկճել յունական յեղափոխիւնը, վասն որոյ սուլթան Մահմուլդը օգնուեցաւ իր վասսալ Եզիդապոսի Խեղիվից՝ Մահմետից, որ ամառը 1824թ. մեծ գումարատակով ուղարկեց իր որդի Խբրայիմին Յունաստան, բայց յոյներին էլ նոյնպէս օգնութիւն էր համառ Եւրօպայի ժողովուրդները խիստ համակրանօք նայում յոյների ապստամբութեան վրա, որ թափէս ցոյց էին տալիս նրանով, որ հելլենականացող կազմելով, հաւաքում էին գույքը և ամենայն պատերազմական պիտոյք և զարկում յոյներին։ Մինչև անգամ հելլենական մարդիք ամենայն երկրից թափվում էին Յունաստան և կազմելով հելլենասիրաց գունդ անպաշտանում էին ազատութեան սուրբ գլուխիան մինչև անգամ 800,000 ֆունտ ստերլինգ տուեց յոյներին։ Այս համակրական մունքները Եւրօպայի ազգերի կողմից քաջալել էին յոյներին, որոնք տոկունութեամբ և աթեամբ շարունակում էին կռւել օսմանց հետ։

Բաւական է մի հայեացք ձգել Միսա  
բերդի պաշտպանութեան վրա, որ համկանան  
ինչպիսի հերոսութիւններ էին ցոյց տալիս յու<sup>1</sup>  
ազատութեան համար սկսած պատերազմուա  
բերդը երեք անդամ պաշարվեցաւ տաճկաց  
քերից, առաջին և երկրորդ պաշարումը տ  
տարի, բայց շնորհիւ բերդականների անսաւել  
ջութեան, տաճկինները կորցնելով շատ մար

փող, ստրաված էլլու հաւաաալ, բայց ուրիշ  
շարման ժամանակ Միսսօլունդին կտրված է  
ծովի և ցամաքի կողմից պաշար ստանալուց,  
հիւ եղիստացոց գօրքի օդնութեան, հարկա-  
ցաւ քաղցածութեան պատճառաւ կամ ու  
տուր լինել, կամ թէ ընդմիջելով օսմանցոց  
քը, զէնքը ձեռին բերդից գուրս գալ և հեռ-  
Նոքա ընտրեցին վերջինը և ամերող յու-

2000 մարդ կարողացան ազատվել անցնելով թռքերի միջից, մնացածները կոտորվեցան (ապա 22. 1826թ.):

Յունաց ապստամբութեան ժամանակ թիւրք  
ցոյց տուին շատ տեղ սարսափելի գազանութիւն  
ինչպէս նէօս կզզու բնակիչների կոտորումը,  
Եւրօպայի ժողովրդների մէջ մի և նոյն ժաման  
աւելի ատելութիւն յարոց դէպի թիւրքերը,  
համակրանք դէպի յոյները, Այս համակրանք  
Ոնզիւայում անցաւ և պետական շրջանները,  
կառավարութեան դէկը պահպանողական կուս  
ցութիւնից անցաւ ազատամիտների ձեռքը,  
լորդ կեսարէրի տեղ առաջի մինխատը ընտր  
ցաւ գեօրգ կաննինզ: Այս պատկառելի պետա  
անձը, ինչպէս այժմ Գլադիուսը, ընտրած էր  
համար դեվիզ—տարածել աշխարհիս ամենայն  
քաղաքական և կրօնական ազատութիւն: Հա  
ճայն իր ընտրած պրինցիպի կաննինզը չը յա  
ղեց միջամտել տաճկաց և յունաց գործի  
հրաւիրելով ուսւաց և ֆրանսիայի տէրութիւն  
դադարեցնել կուրու և ընդունել յունաց տէ

թիւնը ազատ և միասգամայս ամպար թէ  
կայսերութիւնից, որ և կատարվեցաւ 1827 թ. յ  
սի 6-ին Լօնդոնի պրոտօկոլի հիման վրա:  
Սապիսի յոյները 8—9 տարի պատերազ  
և մեծ գոճաբերութիւններ անելով, ցոյց տուշն  
րապային, որ արժանի են ազատ կեանք վար  
ուստի մեծ պետութիւնները միջամտելով ստ  
ցին սուլթանին հրաժարվել Յունաստանից և  
քանի կղզիներից, որոնցից այժմ կազմված է  
նաց թագաւորութիւնը, իսկ իթէ նրան  
չը կռւելին բարբարոսների դէմ, այլ թէ ո  
նման տանէին իրանց դառը լուծը, բաւականա  
միայն առանց հետևանքի մնացող բողոքն  
այս կամ այն պետութեան ներկայացուցչին  
ժամանակ ի հարկէ Եւրոպայի ոչ մի տէրո  
մեծ ուշք չէր դարձնի նրանց հարցի վրա,  
նան մի ազգի առաջնորդութանականը հենց ին

փոքրիկ ազգ՝ սերբացիք, չերնագորցիք, բուլղար-  
ցիք, յոյները և բոլգարացիք չաղատվեցան տաճ-  
կաց լծից առանց զէնքի, առանց զոհարերու-  
թեանց. ուրիշ տէրութիւններ միջամտեցին միայն  
այն ժամանակ, երբ որ այդ ազգերը առաջ իրանք-  
սկսեցին կռւել. ի հարկէ, սրանից մի 30—50  
տարի առաջ մեծ պետութիւնները ուշ էին միջա-  
մտում, Կռիւը մի քանի տարի քաշում էր, իսկ  
այժմեան արևելեան հարցը այնչափ գրաւում է  
տէրութեանց ուշը և այն ֆազիսի մէջն է. որ  
3—4 ամսվայ կռւից յետոյ չեն յապաղի միջա-  
մտելու.

Աշխարհս այնպէս է, որ զօրեղը թոյլին աշխատում է կլանել, իսկ ամեն ոք որ ուզում ապրել (իսկ նև չէ ուզում ապրել) պէտք է մտածի ինքնապաշտպանութեան համար. մարդս իրաւոնքները կարող է զանել և պաշտպանեմիայն ուժով. նա է միայն արժանի, ասում է Երևելի գերմանացի իրաւաբան Երինզը, Կեանքի ազատութեանը, որ ամենայն օր ձեռք է բերու նրանց ուժով. Ամենայն մի անիրաւ յարձակմասկանացիք սրով էին ընդդիմադրում, որովհետ գիտէին, որ եթէ մի անգամ թոյլ տան և հնազանդվեն, թշնամու ագահութիւնը և յանդգնութիւնը կաւելացնեն. անհոգութիւնը և երկչոսութիւնը դէպի ամենայն չարիք, կը հասցնէ նրա

թաղարակութիւնն է մեղաւոր, որ հալու  
ծում է արդարութիւնը, այլ մեղաւոր է արդարու-  
թիւնը, որ թոյլ է տալիս նրան բանանալ իր վրա

Բ. Սարգսեանց

Յունական հաւատարմատար Վրայլասի տով  
խաղաղասիրական յայտնութիւնները, որոնց կիչ  
նա առաւ բերլինի մէջ այստեղից իր հայր  
րենիքը ուղերդվելու ժամանակ, չափազանց գեց  
գրգռեց այստեղի ալբանցիներին, որոնք պատշաճում էին Յունաստանի հետ պատերազմելու համար և, ինչպէս երեսում է, անհամբերութեամբ սպասում էին այդ պատերազմին: Ենիշ-Զամբ մեջետի մէջ եղած ցոյշերը բաւականաչափ ցոյշ են տալիս այստեղի ալբանական գաղթականութեան պատերազմական տրամադրութիւնը: Դրանից յետոյ դարձեալ մի քանի անգամ ցոյցեր եղան: Ալբանական հին սովորութեան համեմատ մեշետը շրջապատող ահազին հրապարակի զանազան մասերի վրա ալբանական գրօշակներ կային: Ցեղերի առաջնորդները հրաւիրում էին ալբանցիներին զինուոր գրվել, գրում էին նրանց անունները և յայտնութիւնները: Զինուորների այսպիսի բացարձակ հաւաքելը իշխանութեան համաձայնութեամբ բաւական անհանդացրին յոյներին: Յունական գեսապանը լինդրեց պ. Գօշենին, որ նա միջնորդի սուլթանի մօտ զինուորների հաւաքելը գաղարեցնելու համար: Յոյները աւելի լաւ միջոց գտան այդ նպատակին հասնելու համար: Նրանք կաշառեցին մի ալբանցի պօլիցիականի, որ յայտնեց Խաֆիզ-Փաշային, թէ ալբանցի նոր զինուորները մտադիր են մերժել սուլթանի իշխանութիւնը և Ալբանիան անկախ յայտնել և թէ այդ մտադրութեան մասին նրանք բացարձակ խօսում են: Խաֆիզ-Փաշա խակոյն արգելեց զինուորներ հաւաքել և թէպէտ ալբանցիները բողոքեցին այդ կարգադրութեան դէմ և հաստատեցին, որ լրաբերը կաշառված էր, բայց Հրամանը այլ ևս յետ չառնվեցաւ: Այն ժամանակվանից, ինչ Աբբեդին-Փաշա մինխստ նշանակվեցաւ, յոյները լուր են տարածել, որ նա Էպիրոսի բազմաթիւ անուանի ալբանցիների հետ մի գրութեամբ խնդրել են Գէորգ թագաւորից Էպիրոսը միացնել Յունաստանի հետ: Թէպէտ Աբեդին-Փաշա մերժում է այդ լուրը, բայց շատերը հաւատացնում են, որ նա Ճշմարիտ է:

անսկում են, որ բացի շրջակաների բնաւերից, Փարիզը չափաւոր կերպով մասնակերէկվայ տօնին։ Սովորապէս այդ երկու մերն էլ իրաւունք ունեն։ Փարիզի բնաւերը առանց ոգեորութեան վերաբերվեցին ծին այն պատճառով, որ այդ բոպէին նք առանձին պատճառ չունէին ուրախաւու և ոգեորպէլու։ Բաստիլիայի վերցնելու կարելի էր միայն այն ժամանակ ազգային գարձնել, եթէ գրանով Ֆրանսիայի մէջ որովին վերջանար յեղափոխական տարրը եթէ ազգաբնակութիւնը հաւատացած լին, որ այսուհետեւ նա կարող է խաղաղ և նղիստ ապրել և յեղափոխութեան պը լզներից օգուտ քաղել։ Տարաբաղդաբար դպէս չէ։ Այն մարդիկ, որոնք ներկայ բուժում իշխում են, թէպէտ ամենքին հաւատացնում են, որ այսուհետեւ Ֆրանսիան զարգացումը կը շարունակի վերանորովկան ձանապարհով, բայց ամբոխը դրանց հաւատում։ Այս պատճառով շատերը բրծում են, որ կառավարութիւնը ֆրանսական ազգային տօնի համար կարող էր ելի աջող օր ընտրել, քան թէ յուլիսի 14, սինքն այն օրը, երբ Ֆրանսիական յեղափոխութիւնը առաջին անգամ բռնութեան նապարհի վրա կանգնեց։

Նթէ ամբոխի ոգեորութիւնը մեծ չէր, նու ամենայինիւ պէտք է գովել ֆրանսիական սասարակութեանը նրա չափազանց բարեւով վարմունքի համար։ Ամբողջ օրը Փարիզի ջ ոչ մի կոխւ, ոչ մի անկարգութիւն և ինչ ցոյցեր չեղան։ Երկու միլիոնաւոր ազգանակութիւնը շարժվում էր, զուարձուեան մի կենտրոնից դէպի միւսը անցնելով ոչ մի տեղ չը հաւաքվելով, այնպէս որ սրբողութեանը արգելք լինէր։ Հարիւրաւոր եղեր կազմված էին զուարձութեան կենտրոններ։ Վաղ առաւօտից մինչեւ էս գիշեր մբոխը զուարձանում էր և ոչ մի տեղ կարսպահութիւնը չը խանգարվեցաւ։ Թէպէտ ահպանողսկան կուսակցութեան մամուլը առաջուց նախագութիւնը չը խանգարվեցաւ։ Պահանջութիւններ և ժողովրդական ցոյցեր կը լինեն, բայց առաջ էլ նրան ոչոք

քտնվում է այս ծշմարիտ ազգային զօր-  
առաջ, որոնց Ֆրանսիան կազմում է իր  
լաւ մասից, տալով նրան իր երիտա-  
թիւնը, ոյսինքն տալով այն, ինչ որ  
հենաթանգարինը, ամենասպազնիւր, ամե-  
ն է և այդպիսով ներշնչելով զօր-  
Աշջ իր խելքը և իր զգացմունք-  
ոգեորելով նրանց իր հոգով և  
փոխարէն զօրքերից իր որդկերանցը  
տանալով Ճմարտութեան համար կրթ-  
զինսւորական կարգապահութեան շկո-  
մէջ, որտեղից նրանք մացնում են  
իայի քաղաքային կեանքի մէջ յարգանք  
իշխանութիւն, պարտաձնանաշութեան  
հունք, հաւատարիմ ոգի, ամենամեծ  
նասիրութիւն և պատուասիրութիւն և  
որական արհեստի քաջ բարեզործու-  
ներ, որոնք նրանց գեղեցիկ մարդկի և  
քացիներ դարձնելու համար անհրաշ-  
են: Եթէ Ֆրանսիան ոչինչ չը խնայեց  
բքերին բարձրացնելու համար, զօրքերն  
անց կողմից ոչինչ չը խնայեցին երկրի  
տանկըներին աջակից լինելու համար.  
տանքի, ուսումնասիրութեան և զինուո-  
ն կարգապահութեան ձանապարհով  
ըլլ գրաւական դարձան Ֆրանսիայի  
շահաւոր յարգանքի և խաղաղութեան, որ  
ամենում է պահպանել: Այդպիսի զգաց-  
ներով հանրապետութեան կառավարու-  
թը յանձնում է ձեզ այս դրօշակները:  
ննեցէք սրանց իբրև գրաւական այն  
յարգանքի, որ կառավարութիւնը ունի  
զօրքերը: Ընդունեցէք սրանց իբրև  
երի դէպի ձեր քաջութիւնը, ձեր պար-  
սնաչութիւնը, ձեր հաւատարմութիւնը  
սիային, որ յանձնում է ձեզ այս  
ակների հետ, այս ազնիւ նշանաբանների  
իր պատուի, իր երկրի և իր օրէնքնե-  
աշտապանութիւնը:

ենիիի այդ կարծ ձառի վերջը միաձայն  
զմկալի ազաղակներով և ծափահարու-  
ներով ընդունվեցաւ: Գրեվիի լեզուն  
հանրապետութեան նախագահի լեզու

նչեւը գունդի գրօշակակիրը մօտենում էր  
նրապետութեան նախագահին, որի մօտ  
տահում էր իր գնդապետին և յանձնում  
նրան դրօշակը: Գնդապետը իջեցնում էր  
շակը նախագահի առաջ, որից սահնում  
դրօշակը և գրօշակակիրին տալուց յետոյ  
ում էր իր գունդի մօտ: Դրօշակակիրները  
խագահին երկու կողմից էին մօտենում,  
դպատճառով հանդէսը կէս ժամվայ մէջ  
ոջացաւ:  
Դրօշակները ստանալուց յետոյ զօրքերը  
սնդիամատոր քայլով անցան նախագահի  
առաջ: Զօրքերը չափազանց գեղեցիկ էին  
ոյլում և անցեալ տարփանից աւելի լաւ  
և պատրաստված:  
Նոր գրօշակները չափազանց լաւ ձաշաւ  
վ են շինված: Նրանց վրա ոսկեայ տաշ  
երավ զրված են մի կողմից. «Republique  
francaise» (Ֆրանսիական հանրապետութիւն)  
Honneur et Patrie» (պատիւ և հայրենիք),  
ուս կողմից զլիսաւոր կուլների անունները,  
ոնց գունդը մասնակցել է:  
Վերջայնելով այս թղթակյութիւնը, չեմ  
սրոյ չը հիանալ պօլիցիսյի գեղեցիկ կար-  
սդրութիւններով: Հազարաւոր կառքեր մըտ-  
ում էին բուլօնի անտառը և գուրս գալի-  
ռանց մի բոպէ կանգնելու. կարգադրութիւն-  
ները չափազանց խելացի էին:

---

## «ՄՃԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԴԻՑ

ԲԵԲԼԻՆ, 15 յուլիսի: Այսօր հասաւ այս-  
ող մարկիզ Ցղենդ:

Կ.ՊՕԼԻՍ, 15 յուլիսի: Բ. Դրան պատաս-  
անը պետութիւնների ընհանուր զրու-  
թեանը, մինխարներից հաւանութիւն ստա-  
ած և պատասխանի բնագիրը փոփոխու-  
թիւնների ենթարկած, առաջարկված է  
ուլլթանին հաստատելու համար: Վիճնայի-  
ուրը, իրը թէ պատասխանը յանձնված է  
պետութիւններին, սխալ է:

ՓԱՅԻԶ, 16 յուլիսի: Երէկ յանձնվեցաւ Բ.  
Դրան պատասխանը պետութիւնների ընդհա-  
տուր զրութեանը: Պատասխանը յայտնի է

# «ՄԵԱԿԻ» ՀԵՇՎԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 15 յուլիսի: Այսօր հասաւ այս-  
եղ մարկիզ Յգենդ:  
Կ. ՊՈԼԻՍ, 15 յուլիսի: Բ. Դրան պատաս-  
տանը պետութիւնների ընհանուր զրու-  
թեանը, մինխտրներից հաւանութիւն ստա-  
ած և պատասխանի բնագիրը փոխիտու-  
թիւնների ենթարկած, առաջարկված է  
ուլթանին հաստատելու համար: Վիեննայի  
ուրը, իբր թէ պատասխանը յանձնված է  
կետութիւններին, սխալ է:  
ՓԱՌԻԶ, 16 յուլիսի: Նրէկ յանձնվեցաւ Բ.  
Դրան պատասխանը պետութիւնների ընդհա-  
ուր զրութեանը: Պատասխանը յայտնի է

Temps լրագրի նախկին հեռագիրներից:  
Թրանսխական օֆիցերների Յունաստան ուղար-  
կելը յետաձգված է:  
ՎԻԵՆՆԱ, 16 յուլիսի: Բ. Դրան պատաս-  
սանը պետութիւնների ընդհանուր գրու-  
թեանը այստեղ սպասվում է ուրբաթ: Պա-  
տասխանը կազմել է Մուտուրուս-փաշա: Լուր  
է տարածված, որ Արեգդին-փաշա հրաժար-  
վում է իր պաշտօնից: Վերանորոգութիւն-  
ների մինիստրութիւն կը նշանակվի, եթէ  
գործը ծովային ցոյցերին հասի: Նթէ  
պետութիւնների համաձայնութիւնը պահ-  
պանվի, միացեալ նաևատորմը խարիսխ  
կը դցի Մարմարեան ծովի մէջ Կ. Պօլսի  
Հանդէպ:

ՕԴԵՍՍԱ, 16 յուլիսի: Այսօր առաւտօն  
«Նախիմօվկ» շոգենաւով բերված է սպանված  
տ. Սկորոլեվի մարմինը: Աղքեալիսկուպս Պլա-  
տոն, մայր եկեղեցու տեղապահը և հո-  
գեորականութիւնը հոգեհանգիստ կատարե-  
ցին: Ներկայ էին իշխանութիւնը, քաղմա-  
թիւ ժողովուրդ, տ. Սկորոլեվի քոյրերը Պօլ-  
տավցեվա և Ֆերերցօվա, Կարմիր Խաչի քոյ-  
րերը: Դագաղը ծաղիկներով զարդարած զըր-  
վեցաւ զագօնի մէջ և այսօր ուղարկվեցաւ

Եւեպան: 1,0ՆԴՌՆ, 16 յուլիսի: Համայնքների ժողովում լօրդ Հարտինգտոն կարդաց Հետեւեալ Հեռագիրը Կանդահարից. Գնեներալ Բերառույի պատերազմական ոյժերը ոչնչացրած են, Կանգարի սահմանական զօրքերը ամրոցն են քաշվում, Բօմբէյի բոլոր ազատ զօրքերին հրաման է տուած ուղեղորդի Կանդահար: Միւլյայից զօրաբաժին է գնում:

